

ՄԱՐԻԱՄ ՄԻԱՍՆԻԿԻ
ՄԽԻԹԱՐԵԱՆ-ՄԱՐԳԱՐԵԱՆ

Գաշնակահար, Երևանի Կոմիտասի անուան պետական
կոնսերվատորիայի Գյումրիի մասնաճիղի պրոֆեսոր
Email: mariammargaryan021@gmail.ru
Doi.10.58580/18290019-2022.2.63-105

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի
երաշխավորությամբ՝ Գոհար Կառլենի Շագոյանի՝ 8.2.2023 թ.,
ընդունվել է սպագրության՝ 10.2.2023 թ.,
ներկայացրել է հեղինակը՝ 20.1.2023 թ.

ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԳՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

**ՍԵՊՈՒՏ ԱՐԳԱՐԵԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ
ՄՇԱԿՈՅԹՆԵՐԻ ԽԱՉՄԷՐՈՒԿՈՒՄ**

Ամփոփում

Հայոց սփյուռքի ձևավորման շրջանից ի վեր ասպարեզ են գալիս արուեստագետներ, որոնք ամբողջ կեանքում ծառայում են սրբազան մի առաքելության, այն է կամրջում են հայրենիքից հեռու դեզերող ազգակիցների հոգևոր ընձիղները ի վերուստ տրված համազգային ոգեղեն արժեքներին:

Ներկա հաղորդման մէջ անդրադարձել ենք Սեպուհ Լաւտոնի Արգարեան արվեստագետի գործունեությանը: Վառ անհատ, որը ճակատագրի բերումով յայտնել էր հայկական և համաշխարհային մշակոյթների խաչմերուկում: Արտացոլելով XX դ. բնորոշ շունչն ու երաժշտական մտածողությունը, իր ստեղծագործությունների մէջ կոմպոզիտորը մշակել է ճկուն և արտահայտիչ ֆակտուրա: Ստեղծագործություններում ներդաշնակորեն համադրվում են խորքային մեկնաբանման կարողությունը վիրտուալ կատարողակա նության հետ: Նրա ստեղծագործություններն առանձնանում են հոգեբանական խորությամբ, ինքնատիպ փիլիսոփայությամբ: 2001-ից Ս.Արգարեանն իր ողջ մասնագիտական ջանքն ու եռանդը ներդրեց Գյումրու ԳՈՀԱՐ երգչախմբի և սիմֆոնիկ նուագախմբի կայացման և մասնագիտական վերելքի արժեքատր գործին:

Բանալի-բառեր. Սեպուհ Արգարեան, դիրիժոր, երաժշտական հասարակական գործիչ, մշակոյթային ժառանգութիւն:

Abstract

Pianist, Professor at the GF of YSC Mariam Myasnik Mkhitaryan-Margaryan. - “The Activity of Sepuh Abgarean at the Crossroads of Armenian and World Cultures”.

Since the formation of the Armenian diaspora, artists have emerged, driven by a sacred mission that permeates their entire existence, bridging the spiritual connection between compatriots living far from their homeland and the universal national values bestowed upon them from above. In the present program, we referred to the artistic activity of Sepuh Levon Abgarian, a remarkable individual who, by the hand of fate, found himself at the crossroads of Armenian and world cultures. Reflecting the distinct breath and musical thinking of the XX century, the composer developed a flexible and expressive style in his works. The compositions harmoniously combine the ability of profound interpretation with virtual performance. His works stand out by their psychological depth and original philosophy. Since 2001 S. Abgarian has dedicated all his professional effort and energy to the noble cause of the establishment and professional rise of the Gyumri GOHAR choir and symphonic orchestra.

Key Words: Sepuh Abgarean, conductor, musical public figure, cultural heritage.

Абстракт

Пианистка, профессор Мариам Мясниковна Мхитарян-Маргарян. - “Деятельность Сепуха Абгареана на перекрестках армянской и мировой культур”.

С момента образования армянской диаспоры на сцену выходят художники, которые всю жизнь несут священную миссию: соединяют духовные ценности соотечественников, живущих вдали от родины, с национальными духовными ценностями. В настоящей работе мы коснулись деятельности художника Сепуха Левоновича Абгареана - яркой личности, волею судьбы оказавшейся на стыке армянской и мировой культур. Отражая типичное веяние и музыкальное мышление XX века, композитор в своих произведениях развил гибкую и выразительную фактуру. В его произведениях способность глубокой интерпретации гармонично сочетается с виртуальным исполнением. Его работы отличаются психологической глубиной и неповторимой философией. С 2001 года С. Абгареан приложил все свои профессиональные усилия и энергию в важное дело становления и профессиональный рост гюмрийского хора и симфонического оркестра ГОАР.

Ключевые слова: Сепух Абгареан, дирижер, музыкальный общественный деятель, культурное наследие.

Նախաբան

Հայոց սփիւռքի ձեւավորման շրջանից ի վեր ասպարէզ են գալիս արուեստագէտներ, որոնք ամբողջ կեանքում ծառայում են սրբազան մի առաքելութեան՝ կամրջում են հայրենիքից հեռու դեզերող ազգակիցների հոգեւոր ընծիւղները ի վերուստ տրուած յամազգային ոգեղէն արժէքներին: Նրանցից շատերն այս կամ այն չափով սերտ առնչութեան մէջ են գտնում հայրենիքի մշակութային ձեռքբերումներին, յաճախ իրենց անմիջական մասնակցութեամբ մի հատուկ ոգևորութիւն են բերում ստեղծագործական կեանքին և առաւել չափով խթանում սփիւռքահայ մեր հայրենակիցների հոգեւոր մերձեցման ընթացքը: Սակայն քիչ են այն արուեստագէտները, որոնք հեռվում թողնելով վաղուց կայացած նիստուկները, աշխատանքային մթնոլորտն ու շրջապատը, իրենց մերձատրներին ու գործընկերներին, մի առանձնահատուկ նուիրումով ու բաղձանքով ստեղծագործում են հայրենիքում:

Ներկա յարդրման մէջ խոսելու ենք Սեպուհ Լեւոնի Արզարեան արուեստագէտի մասին, ով ճակատագրի բերումով յայտնվել է հայկական և համաշխարհային մշակոյթների խաչմերուկում ... Նրա ընտանիքը 1896 թ. ջարդերի ժամանակ գաղթել է Մասունից և հասել Սիրիա: Ծնունդ է Կիպրոսի Նիկոսիա քաղաքում: Երաժշտութեան հանդէպ սերն սկսուել է դէռ վաղ յասակից, որը սերմանել է մայրը՝ Երմօնէ Արզարեանը: Նա տիրապետել է վեց լեզուների: Սովորել է ազգային վարժարանում՝ Լ. Արզարեանի մարզանքների դասարանում: Անգուգական է համարել Մայր Հայաստանի դերը, երգել է Բարսեղ Կանաչեանի «Գուսան» երգչախմբում, աշակերտել է գրականագէտ Յակոբ Օշականին:

Հայրը՝ Լեւոն Արզարեանը, փոքր տարիքից ներգրավուել է ֆիդայական շարժման մէջ, եղել է Անդրանիկ զորաւարի զինուորներից: Հայկաից զենք է փոխադրել և ակտիվ գործողութիւններ ծաւալել պատերազմի ժամանակ:

1922 թ. Լ. Արզարեանին (մահմէդական հագուստով ծպտուած) հաջողում է փախչել Թուրքիա, այնտեղից՝ Լիբանան: Հայ մարտիկն արաբերէն, թուրքերէն լեզուների փայլուն իմացութեան շնորհիւ հասնում է Սիրիա:

Լիբանանում Լ. Արզարեանն իրեն նւիրում է մանկավարժութեանը: Նա իր պարտքն է համարում հավաքել հազարաւոր հայ որբուկների և նրանց տեղադրել Հայկաի Այեթեան որբանոցում: Այդ որբանոցի սաներից են եղել նաև մեր հայրենակիցներ՝ կոմպոզիտոր Ազատ Շիշեանը և գեղանկարիչ Հարութիւն Կալենցը (Հ. Խարմանադեանը): Ի դեպ, Հարութիւն Կալենցը զգալով վեց տարեկան երեխայի արտայայտուած օժտուածութիւնը, սկսել է զբաղուել փոքրիկ Սեպուհի հետ գեղանկարչութեամբ և զձանկարչութեամբ:

Սեպուհի մէջ երաժշտական տաղանդը հոր հայրենասիրութեան յետ միահիւսելով միս ու արիւն են դարձել, եղել են նրա կեանքին և գործին անմնացորդ նւիրվածութեան վառ օրինակ (1.): 10 տարեկանից սկսում է ապագայ արուեստագէտի բուն ուսումնառութիւնը: Բանաստեղծութիւն, նկարչութիւն, երաժշտութիւն

...սհա նրա ինքնարտայայտման ձեւերը: «Տասը տարեկան էի, - յիշում է նա, - երբ ընտանիքս տեղափոխուեց Հայէպ, ընդունուեցի Մխիթարեանների վարժարան, այնուպէս ընդունուեցի Մելգոնեան կրթական հաստատութիւն, որտեղ 6 ամիս սովորեցի Վահան Պետելեանի և Բարսեղ Կանաչեանի դասարանում» (2.):

Խոսելով Մելգոնեան վարժարանի մասին, նշենք, որ Ս. Արզարեանը 1954-1999 թթ. մանկավարժական գործունեութիւն է ծավալել նոյն վարժարանում՝ վարելով ուսուցչապետի պաշտօն, դասավանդելով երգերաժշտութիւն և արուեստի պատմութիւն: Սիրուած ուսուցչին երախտագիտութեամբ են հիշում աշակերտներից շատերը՝ վկայելով նրա պատմական և գեղարուեստական գրականութեան խորն իմացութիւնը, բնատրութեան ազնիվ գծերը, նրան համարելով իրենց ստեղծագործական կեանքում արժանի ավանդ ունեցող ուսուցիչ*:

Սեպուհին վաղ տարիքից բախտ վիճակուեց ուսանել այնպիսի երաժիշտների մոտ, որոնց միջոցով նա ընկալեց Կոմիտասի մեծութիւնը, որոյն ոճը, ինչը հետագայում արտացոլվեց նրա ստեղծագործական հարբստութեան մէջ: Իր ժամանակի մեծագոյն երաժիշտ ուսուցիչների հոգեւոր մշակոյթը, բարոյական որակները, սէրն ու նւիրվածութիւնը գործի յանդէպ, ստեղծեցին այն մթնոլորտը, պարարտ միջավայրը, ուր և տարեցտարի բարգաւաճեց պրօֆեսիոնալ վարպետութիւնը: Մելգոնեանում Սեպուհն ուսումնասիրում է կոմպոզիցիայի տեսութիւն, մշակում է ձայնը (լիրիկական տենոր), սովորում դաշնամուր ու թավջութակ նվագել, զբաղվում է պարարուեստով, ծանոթանում խմբավարութեան արվեստին:

Փարիզ ... այստեղ էր, որ այնուհետև իր բարձրագոյն արուեստագիտական ուսումը 1951-ից շարունակեց Սեպուհը: Տարիներ, որոնք նրա համար դարձան համաշխարհային արուեստին որդեգրման, յուրովի ընկալելու և կիրառելու մեծ դպրոց: Այստեղ նա սովորում է այնպիսի երաժիշտների մոտ, ինչպիսիք էին Ժորժ Դանդլոն (հարմոնիա), Շարլ Բոքսէն (կոմպոզիցիա և կոնտրապունկտ): Ս. Արզարեանի ուսուցիչներից էր նաև ռուսական դպրոցի ներկայացուցիչ, Ն. Աիմսկի-Կորսակովի աշակերտ Ն. Մուրավյովը (հարմոնիա և կոմպոզիցիա), ով բռնութեան ենթարկուելով, ստիպուած թողեց ընտանիքը և պատասպարվեց Փարիզում:

Անդրանիկ ստեղծագործութիւնը, որ ներկայացրեց Ս. Արզարեանը Մուրավյովին, դա Խ. Դաշտենցի «Ջանգուի կամուրջ» բանաստեղծութեան վրա գրուած ռոմանսն էր՝ յորինուած կոմիտասեան ոճով: «Նա նստեց դաշնամուրի մոտ և սկսեց նուագել, հետո խիստ հայացքը հանեց վրաս ... , - յիշում է Մաեստրոն, - ... ապա բարձրացավ աթոռից, ծանր քայլերով մտուեցավ ինձ, ձեռքը դրեց ուսիս և խորհուրդ տուեց հետևել ազգային ավանդոյթներին, շարունակել գնալ մեծ Կոմիտասի ճանապարհով» (3.):

Սեպուհն ընտրել էր իր ճանապարհը, լավ գիտակ-

* Աշակերտների նամակներից, որոնք ջերմ նամակագրական կապի մէջ են իրենց ուսուցչի հետ:

հիմնադրման 25-ամյա հոբելյանին

ցում էր անելիքը և հետետղականորեն խորանում էր ինքնակատարելագործման արահետում: Չորս տարի Փարիզի կոնսերվատորիայում ուսանելուց զատ, Սեպուհը մինչև 1958 թ. վարպետաց դասեր է առնում Ն. Բուլանժեի «Ամառային տաղաար»-ում՝ մեծանուն երաժիշտներ Ա. Կոպլենսից, Բ. Բրիտտենից, Դ. Միլո-յից, Ա. Յոնեգերից և ուրիշներից (1.):

Ս. Աբգարեանի ազգանունը գործունեության խոսուն վկաններն են նաև Ֆրանսիայից վերադառնալուց հետո Կիպրոսի ռադիոկայանի հայկական բաժինը դեկտեմբերի տարիները, երբ լիովին դրսևորում են նրա ստեղծագործական ունակությունների առաել ցայտուն կողմերը: Շուտով նա դառնում է Կիպրոսի ձայնասփիռի ընկերակցության հիմնադիրներից մեկը: Որպես «Հայկական ռադիո»-ի խմբագիրն ու խոսնակը, շուրջ 46 տարի նա նուիրվել է հայ մշակույթի հանրահռչակմանը: Իր ստեղծագործական յարուստ գիտելիքները նա կարողացել է հմտորեն փոխանցել մեծ թուով աշխարհասփիռ աշակերտների, ովքեր դարձել են տաղանդաւոր երաժիշտներ:

Մեծ է նրա մենահամերգների (իբրև երգիչ) աշխարհագրութիւնը, տարածուն է քարտէզը. Աթէնք, Բեյրութ, Հալէպ, Կահիրէ, Տոկիոյ, Մարսէլ, Փարիզ ...

Սփիւռքահայ երաժշտական մշակույթը համազգայինի նշանակալից բաղկացուցիչ մասն է, առանց որի ամբողջական չէր լինի հայ երաժշտական արուեստի պատմութիւնը, իմաստային, գեղագիտական, ոճական արժէքն ու բնութագիրը:

Մոտիկից ու անմիջականորեն շփուելով համաշխարհային մշակույթների ժամանակակից ուղուրիւնների նուաճումներին, սփիւռքի հայ երաժիշտները մեր երաժշտութեան մէջ ներմուծում են տարրեր միաւորելով դրանք ազգային հենքի վրա: Սփիւռքահայ արուեստագէտներն իրենց հէրթին բարերար փոխներգործութիւն են ունենում, այլ ժողովուրդների երաժշտական արուեստի վրա:

Սփիւռքահայ երգահանները, ովքեր արմատներով սէրում են հիմնականում Արևմտեան Հայաստանի տարրէր գավառներից, իրենց հետ բերում են տեղի ժողովրդական ստեղծագործութեան ոգին, նմուշները, առանձնայատուկ գծերը, մեղեդին ու ռիթմը, շարահիւսութիւնն ու շէշտականութիւնը, կառուցուածքն ու ոճը: Ժամանակակից գրելաձեւի միջոցով վերստեղծում են մեր հնագոյն երաժշտութեան լավագոյն նմուշները: Երաժշտի կենսագրութիւնը միշտ իր մէջ ներառում է նաև երաժշտական կենցաղի, շփումների ու միջավայրի բնութագրումը, որում էլ ձևաւորում է երաժշտական արուեստը (4.):

Ս. Աբգարեանը մեծ մասշտաբի վառ արտայայտուած արտիստիկ և ստեղծագործական անյատականութիւն է: Արտագոյելով XX դ. բնորոշ շունչն ու երաժշտական մտածողութիւնը, իր ստեղծագործութիւնների մէջ կոմպոզիտորը մշակել է ճկուն և արտայայտիչ ֆակտուրա: Ստեղծագործութիւններում ներդաշնակորեն յամադրուել են խորքային մեկնաբանման կարողութիւնը՝ վիրտուալ կատարողականութեան հետ: Նրա ստեղծագործութիւններն առանձնանում են հոգեբանա-

կան խորութեամբ, ինքնատիպ փիլիսոփայութեամբ:

Ս. Աբգարեանը բազմաթիւ ստեղծագործութիւնների հեղինակ է. խմբերգեր, կամերային երաժշտութիւն, օրատորիա (ըստ Նարեկացու «Մատեան ողբերգութեան», 5 մասից), որն առաջին անգամ կատարուել է Մոնակոյի միջազգային փառատոնում, տէղի սիմֆոնիկ նուագախմբի, երգչախմբի և ճանաչուած մէներգիչների կատարմամբ: Նշենք նրա առաւել յայտնի ստեղծագործութիւնները. Կանտատ (1976 թ.), դաշնամուրային ստեղծագործութիւններ, «Խճանկար» դաշնամուրային զուգանուագ (առաջին կատարումը՝ 2001 թ.՝ Գյումրու Արուեստների ակադեմիայի դահլիճ, կատարողներ Մարիամ և Յողիկ Մխիթարեաններ), երաժշտական երգիծանուագներ (կարիկատուրաներ), Լարային կվարտէտներ «Բիւրակն» և «Մեղրագէտ», Դաշնամուրային կվինտէտ «Ծովասար» (առաջին կատարումը Փարիզի ԲԱԹԲԱ համերգասրահում 1974 թ.), «Սիրային երգեր», հոգետր երաժշտութիւն (5 գիրք): 2009 թ. լոյս տեսաւ Դանիել Վարուժանի «Հացին երգը», Վահան Տերեանի 125-ամեակի առթիւ մի գեղեցիկ տրիտուր՝ բաղկացած 12 ռումանսներից...

2000 թ. սկսուեց տողերիս հեղինակի համագործակցութիւնը Մանստրոյի հետ: «Խաչքար» պրելիւդը, «Էլեգիա»-ն կատարելուց յետոյ զգացի, որ այդ երաժշտական մտածելակերպը (ոճը) իմ հոգում շատ հարագատ է: Յաջորդեց «Խճանկար» զուգանուագի առաջին կատարումը, նրա հեղինակային երկերներից հնչէցին մի շարք վոկալ ստեղծագործութիւններ, դաշնամուրային երկու տէտրեր:

Մանստրոյի հետ մեր համագործակցութիւնը խոր արմատներ ձգեց և միասին սկսեցինք գրադուել նրա ստեղծագործութիւնների հրատարակմամբ (թվով 17 օպուս հրատարակուեց իմ եւ Մանստրոյի համատեղ ջանքերով):

Նախկինում նրա շատ ստեղծագործութիւնները հրատարակուել և կատարուել են Ճապոնիայում, Փարիզում, Բեյրութում, ԱՄՆ-ում՝ արժանանալով մրցանակների: «Նշանակալից է նրա ստեղծագործական հունձը, - գրում է Յիցիյա Բրուտեանը, - բազմաթիւ երգեր, լարային կվարտէտ, կանտատ՝ Սիւրմելեանի «Ծառ մըն եմ ես» բանաստեղծութեամբ, «Հարձը» ըստ Դանիել Վարուժանի, բալէտի և այլ երկերի, գրութեան ոճի ժամանակակցութեամբ, բարձր պոֆեսիոնալիզմով» (4. էջ 57-58):

«Հայաստանում, Ս. Աբգարեանը տարիների ընթացքում ճանաչուեց որպէս երաժշտարուեստի բազմաշնորհ ու անխնց մշակ, հիանալի կազմակերպիչ, - գրում է «Ազգ» օրաթէրթը երեւանյան էլոյթներից մեկի առիթով, - էլոյթ, որ համակուած էր տպաւորիչ, վառ արտիստականութեամբ, երգչախմբի հիանելի զգացողութեամբ, նուրբ երաժշտականութեամբ» (5.):

Եզրահանգում

2001-ից Ս. Աբգարեանն իր ողջ մասնագիտական ջանքն ու եռանդը ներդրեց Գյումրու ԳՈՀԱԲ երգչախմբի և սիմֆոնիկ նուագախմբի կայացման և մասնագիտական վերէլքի արժէքաւոր գործին: Ս. Աբգարեան

Մեծ Գիւմրեցու գործունեութեան մասին շատ է գրուել և խոսուել թէ Հայրենիքում, թէ նրա սահմաններից դուրս:

Ս. Աբգարեանը վառ անհատականութիւն էր: Նա արեւմտահայ և արեւելահայ գրականութեան, դասական երաժշտութեան գիտակ էր, Կոմիտասի, Բախի, Մոցարտի, Վիվալդիի երաժշտութեան մեծ երկրպագու...

Մտայղացումները շատ էին և ստեղծագործ մտքի տէր Ս. Աբգարեանը ջանաց այդ ամենը կեանքի կոչել: Նւիրական աշխատանքը մեծ գնահատանքի արժանացավ երաժշտասէր հասարակայնութեան և երաժշտագէտների կողմից:

ԳՈՀԱՐ սիմֆոնիկ նուագախումբը, որի հիմնադիրն ու գլխավոր դիրիժորն էր նա, հաղթական քայլերով նուանեց հայ ունկնդրի սիրտը, ելոյթներ ունեցաւ շատ երկրներում՝ լեւի-լեցուն դահլիճներում: Ամենուր համընդհանուր ճանաչում վայելող ԳՈՀԱՐ-ը սպասուած հիւր էր, և նրա երկրպագուներն անհամբեր սպասում էին նոր նախագծերի, հիւրախաղերի և սրտարուխ կատարումների:

Ս. Աբգարեան մեծ հայր, որը ճակատագրի բերումով յայտնուել էր համաշխարհային և հայկական մշակոյթների խաչմերուկում, իր ժողովրդի արժանի զավակն էր, և փառքով կրում էր իր նախնիների ժառանգութիւնը՝ փոխանցելով այն ապագա սերունդներին:

ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԾ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

1. Ս. Աբգարեանի անձնական արխիւի նիւթեր:
2. Ս. Աբգարեանի հետ բանաւոր գրոյցից:
3. Ս. Աբգարեանի հուշերից:
4. Բրուտեան Յ. Գ., Հայ երաժշտական մշակույթի աշխարհաստիճանը ընդլուծները, Եր., 1996:

Հեղինակի մասին. ՄԱՐԻԱՄ ՄԻԱՍՆԻԿԻ ՄԵԽԹԱՐՅԱՆ-ՄԱՐԳԱՐՅԱՆ (ծ. 1962 թ. ք. Լենինական): Ավարտել է՝ 1987-ին Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան՝ համերգային մենակատարի, կամերային անսամբլի մենակատարի, դասատուի և կոնցերտմաստերի որակավորմամբ, 1997-ին ավարտել է ԵՊԿ կոնսերվատորիայի ասպիրանտուրան: Դասավանդում է՝ 1989-ից մինչ օրս ԵՊԿ Գյումրու մասնաճյուղում՝ դասախոս, 2018-ից՝ պրոֆեսոր, զուգահեռաբար նաև տարբեր երաժշտական դպրոցներում: Հեղինակ է՝ 18 երաժշտական հրատարակումների կազմող և մասնագիտական խմբագիր, 24 գիտական և մեթոդական հոդվածների: Բազմաթիվ միջազգային մրցույթների դափնեկիր է և բազմաթիվ դափնեկիր սաների դաստիարակ:

About the author: MARIAM MIASNIK MKHITARYAN-MARGARYAN (born in Leninakan, in 1962). In 1987, she graduated from Yerevan Komitas State Conservatory with the qualifications of concert soloist, chamber ensemble soloist, teacher and concertmaster. In 1997, she completed the post-graduate course at Yerevan State Conservatory. Since 1989 she has been teaching at the Gyumri branch of YSC, first as a lecturer, and since 2018 - as a Professor. Meanwhile she has been teaching at various music schools. She is author and professional editor of 18 musical publications, 24 scientific and methodological articles. He is a laureate of many international competitions and a teacher of many laureate students.

Об авторе: МАРИАМ МЯСНИКОВНА МХИТАРЯН-МАРГАРЯН (род. в 1962 г., Ленинанкан). Окончила: Ереванскую государственную консерваторию им. Комитаса по специальности “Концертирующий солист, солист камерного ансамбля, педагог и концертмейстер” (1987); аспирантуру ЕГК (1997). Работает: в Гюмрийском филиале ЕГК в качестве преподавателя (с 1989), профессор (с 2018); в различных музыкальных школах. Автор и профессиональный редактор 18-ти музыкальных изданий, 24-х научных и методических статей. Лауреат многих международных конкурсов и педагог студентов-лауреатов.

5. //Ազգ, 2002 թ., 28 հունիս:
6. Геодакян Г. Ш., Кафедра композиции Ереванской государственной консерватории имени Комитаса, //Музыкальная Армения, 1 (62) 2022., С. 18-23. Materials from S. Abgarian's personal archive. From the talk with S. Abgarian. From S. Abgarian's the memoirs. Brutian Ts. G., World-wide Shoots of Armenian Musical Culture, Yer., 1996. //Azg, June 28, 2002. Gyodakyan G. Sh., Composition Department of Yerevan State Conservatory after Komitas, //Musical Armenia, 1 (62) 2022, p. 18-23.

REFERENCES

1. S. Abgareani anjnakan arxivi nyuther.
2. S. Abgareani het banawor zroytitzit.
3. S.Abgareani howsheritz.
4. Browtyan Tz. G., Hay erazhshtakan mshakowythi ashkharhaspyowr ‘ndzhyowghner’, Yer., 1996 th.
5. //Azg, 2002 th., 28 hownisi.
6. Gyodakyan G. Sh., Kafedra kompozitzi Yerevanskoj gosudarstvennoj konservatori imeni Komitasa., //Muzikal’naya Armeniya, 1 (62) 2022, S. 18-23.